ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/155

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.04.2022թ. թիվ 26/26-1/7641-2022 գրությամբ «Սան Կոմպանի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 22.04.2022թ. թիվ 02/03.5/2496-2022 գրության հիման վրա, 29.04.2022թ. թիվ 26/26-1/7641-2022 գրությամբ նախաձեռնել է «Սան Կոմպանի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Սան Կոմպանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Սան Կոմպանի» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից հայտարարված ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/26 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 3, 4 չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչված «Սան Կոմպանի» ՍՊԸ-ին գնումների էլեկտրոնային www.eauction.armeps.am համակարգով շնորհվել է պայմանագիր, սակայն «Սան Կոմպանի» ՍՊԸ-ն 10 աշխատանքային օրվա ընթացքում չի հաստատել և համակարգով չի կցել պայմանագիրը: Արտակարգ իրավիճակների նախարարության 15.04.2022թ. թիվ 3 որոշմամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի (Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «Սան Կոմպանի» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» պարբերությունը՝ Արտակարգ իրավիճակների նախարարութունը խնդրել է Բողոքներ քննող անձին նախաձեռնել «Սան Կոմպանի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Հայտնում եմ Ձեզ, որ 03.02.2022թ ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/26 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Սան Կոմպանի» ՍՊԸ-ն 3, 4 չափաբաժիններով ճանաչվել է ընտրված մասնակից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը անգործության ժամկետ է սահմանվել 10 օրացուցային օր: Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիր կնքելու արաջարկ է ներկայացրել, սակայն «Սան Կոմպանի» ՍՊԸ-ն 10 աշխատանքային օրվա ընթացքում չի հաստատել և համակարգով չի կցել պայմանագիրը, քանի որ մինչ Աճուրդը մատակարարող ընկերությունը, որից պետք է ձեռք բերվեր տվյալ ապրանքներ ներկայացրել էր այլ գնային առաջարկ, իսկ Պայմանագիրը կնքելու ժամանակահատվածում մատակարարող ընկերությունը ներկայացրել է 2 անգամ ավելի թանկ գնային առաջարկ, հիմնավորումը Ռուս Ուկրաինական հակամարտության ընթացքում ռուբլու արժեզրկումն է, այդ իսկ պատճառով «Սան Կոմպանի» ՍՊԸ-ն որոշեց չկնքել պայմանագիրը էական վնասներից խուսափելու համար:

Այսինքն, ստացվում է, որ եթե հանգամանքների էական փոփոխության պայմաններում «Սան կոմպանի» ՍՊԸ-ն կնքեր պայմանագիր Արտակարգ իրավիճակների նախարարության հետ, ապա կձախողվի ՀՀ քաղաքացիական օրենսդրության սկզբունքը, առ այն, որ իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նման պայմաններում ստացվում է, որ հանգամանքների էական փոփոխությունը հասել է այն աստիճանի, որ խոսք չի կարող լինել «Սան կոմպանի» ՍՊԸ-ի համար առաջացած շահի մասին, քանի որ «Սան կոմպանի» ՍՊԸ-ն ոչ միայն նշված պայմանագրից շահ, շահույթ չի ունենա, այլ էական վնաս կկրի, ընդ որում վնասը ոչ թե ծագել է գործարար շրջանառության սովորույթի պայմաններում, այլ հանգամանքների էական փոփոխության պայմաններում:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշման 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տփալները' համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշման 45-րդ կետի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը ի հայտ են եկել փետրվար ամսին, որ «Սան Կոմպանի» ՍՊԸ-ն հրաժարվում է կնքել պայամանագիրը հանգամանքների էական փոփոխություններից ելնելուվ, սակայն Արտակարգ իրավիճակների նախարարությունը 15.04.2022թ.-ին է կայացրել թիվ 3 որոշում, որի համաձայն «Սան Կոմպանի» ՍՊԸ-ին զրկել է պայմանագիր կնքելու իրավունքից և դիմել է Բողոքները քննող Անձին «Սան Կոմպանի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պահանջով:

Տվյալ դեպքում օրենսդիրը հստակ սահմանել է ժամկետ որոշակիացնելով պատվիրատուի գործողությունները, հակառակ պարագայում կստացվի, որ ցանկացած ժամանակ պատվիրատուն կարող է գրավոր կարգով դիմել լիազորված մարմնին ներկայացնելով մասնակցի վերաբերյալ համապատասխան հիմքեր: Կարծում եմ «Սան Կոմպանի» ՍՊԸ-ն ներկայացրեց բավարար հիմքեր մերժման մասին որոշում կայացնելու համար»:

«Սան Կոմպանի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/155 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 15:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.04.2022թ. թիվ 02/03.5/2496-2022 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից հայտարարված ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/26 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 3,4 չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչված «Սան Կոմպանի» ՍՊԸ-ին գնումների էլեկտրոնային www.eauction.armeps.am համակարգով շնորհվել է պայմանագիր, սակայն մասնակիցը 10 աշխատանքային օրվա ընթացքում չի հաստատել և Համակարգով չի կցել պայմանագիրը: 15.04.2022թ. թիվ 3 որոշմամբ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի (Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սան Կոմպանի» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» պարբերությունը՝ խնդրում եմ նախաձեռնել «Սան Կոմպանի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/155 ընթացակարգի շրջանակներում 07.06.2022թ. ժամը 15:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ՆԳ-2022/155 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/155 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իր կարիքների համար հատուկ նպատակային, հակահրդեհային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սան Կոմպանի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով «Սան Կոմպանի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է «Սան Կոմպանի» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սան Կոմպանի» ՍՊԸ-ն 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի հաստատել և համակարգով չի կցել պայմանագիրը և որոշում կայացրել Ընկերությանը պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.04.2022թ. թիվ 26/26-1/7641-2022 գրությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 22.04.2022թ. թիվ 02/03.5/2496-2022 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,</u>

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի***

ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է սույն պարբերությամբ նախատեսված երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված

փաստաթղթերը կամ ***<u>ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:</u>***

Այսպես, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իր կարիքների համար հատուկ նպատակային, հակահրդեհային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/26» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սան Կոմպանի» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով «Սան Կոմպանի» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է «Սան Կոմպանի» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Սան Կոմպանի» ՍՊԸ-ն 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի հաստատել և համակարգով չի կցել պայմանագիրը և որոշում կայացրել Ընկերությանը պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու վերաբերյալ:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 9-րդ կետի 9.1 և 9.3 ենթակետերի համաձայն՝

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

<u>9.3 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:</u> Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս

աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>***

Այսինքն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում են հստակ ժամկետներ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որոնք չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ ուսումնասիրելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա փաստական հանգամանքների հետ՝ գտնում եմ, որ «Սան Կոմպանի» ՍՊԸ-ն ըստ էության հրաժարվել է պայմանագիրը կնքելուց և թույլ տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում Պատվիրատուին չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի ու որակավորման ապահովումները:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.04.2022թ. թիվ 26/26-1/7641-2022 գրությամբ «Սան Կոմպանի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ